ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 5, 1956 Общественные науки

ԼՐԱՏՈՒ

ՍԵՄԻՆԱՐ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

1956 թ. փետրվարի 19-ին և մարտի 14-ին Հայկական ՍՍՌ ԳԱ Պատմության ինստիտուտի գիրեկցիայի և պարտիական կազմակերպության նախաձեռնությամբ տեղի ունեցավ «Միքայել Նալբանդյանը և հայ հասարակական մտքի զարգացման մի քանի հարցերի շուրջը» թեմային նվիրված սեմինար պարապմունք, որին մասնակցում էին ԳԱ հասարակական գիտությունների մի շարք ինստիտուտների և քաղաքի ԺՈՒՀ-երի աշխատակիցները։ Զեկուցումով հանդես եկավ Ա. Գ. Հովհաննիսյանը։ Զեկուցողը հիմնականում կանգ առավ հայ մեծ ռևոլյուցիոն-դեմոկրատ Միքայել Նալբանդյանի կյանքի, գրական և քաղաքական գործունեության ու 19-րդ դարի հասարակական մտքի զարգացման պատմության մի քանի հարցերի վրա։ Ընկ. Հովհաննիսյանը նշեց, որ Մ. Նալբանդյանի գործունեության լուսաբանությունը գիտական հիմքերի վրա է դրվել միայն սովետական շրջանում։ Մինչև սովետական շրջանի Նալբանդյանին ուսումնասիրողները հայ մեծ ռևոլյուցիոն-դեմոկրատ Նալբանդյանին հաճախ ներկայացրել են որպես լիբերալ գործիչի։

Ընկ. Հովհաննիսյանը մանրամասն կանգ առավ Նալբանդյանի գրական ու քաղաքական գործունեության զարգացման էտապների վրա, տալով Նալբանդյանի հայացքների ընդհանուր գնահատականը։

Զեկուցումից հետո տեղի ունեցած մտքերի փոխանակությանը մասնակցեցին ֆիլոլոգիական գիտությունների թեկնածուներ՝ Ա. Ինճիկյանը, Աս. Ասատրյանը, Է. Մարգսյանը, սոսպիրանտ Հ. Ղազարյանը և ուրիշները։

Վերջում հանդես եկավ Ա. Գ. Հովհաննիսյանը։ Սեմինարի մասնակիցները ցանկություն հայտնեցին, որ հայ ժողովրդի պատմության ու հասարակական մտքի զարգացման կարևոր հարցերի վերաբերյալ նման սեմինար պարապմունքներ կազմակերպվեն հաճախակի։